

# ԻՆՉ ԿԸ ՓՆՏՌԵՄ



## ԻՆՉ ԿՐ ՓՆՏՌԵՍ

Ժողովրդական թերթի մը մէջ կը յիշուի թէ Էլիպասայթթ Թէյլըր, իր գեղեցկութեամբ եւ դերասանութեամբ նշանաւոր շարժանկարի աստղը՝ առիթով մը ըսած է. «Միայն Աստուած գիտէ թէ ինչը չե՛մ փորձած. փառք, ճաշեր, այր մարդիկ, թմրեցուցիչներ եւ խմիչք, բայց երբեք խաղաղութիւն չգտայ»: Եւ թղթակիցը շարունակելով ըսաւ թէ, Թէյլըր իր մահամերձ մօրը նայելով՝ որ խաղաղ քունի մէջ էր, տխրութեամբ ըսաւ. «Թերեւս միակ խաղաղութիւնը մահն է»:

Թղթակից մը, նշանաւոր բոք երգիչ եւ դերասան Էլվիս Ֆրեսլիին մահուրնէ վեց շաբաթներ առաջ հարցուց. «Էլվիս, երբ որ քու ասպարէզդ սկսար իբրեւ երգիչ, ըսիր որ կեանքիդ մէջ երեք բաներ կ'ուզես ունենալ. հարստութիւն, փառք եւ երջանկութիւն: Արդեօք երջանի՞կ ես, Էլվիս»: Ան պատասխանեց. «Ո՛չ, ես շատ դժբախտ եւ առանձին կըզգամ, կարծես դժոխքի մէջ եմ»:

Կ'երեւայ թէ հարստութիւնը, փառքը, կեղծ բարեկամութիւնը, նոյնիսկ երիտասարդութիւնը՝ չեն կրնար խաղաղութիւն եւ երջանկութիւն բերել: Եւ այս երկուքը բացառութիւն չեն կազմեր: Բոլոր տիեզերքը հարուստ եւ նշանաւոր մարդոցմով լեցուն է, որոնք դժբախտ են եւ առանձին կը զգան: Անձնասպան եղողներուն թիւը, որոնց մեծամասնութիւնը երիտասարդ են, օրէ օր կ'աւելնայ:

Առանձնութիւնը եւ յուսախաբութիւնը մարդոց անլուծելի խնդիր մը դարձած է: Միայն աղքատ ու հիւանդները չեն որոնք առանձնութենէ, վախէ, ընկճուածութենէ եւ մտահոգութենէ կը տառապին, եւ կը խոստովանին թէ դժբախտ են: Այրեր եւ կիներ, ծերեր եւ երիտասարդներ, հարուստներ եւ աղքատներ ամէն տեղ կը ցանկան երջանկութիւն եւ խաղաղութիւն գտնել: Բայց դժբախտաբար